

# ԴԱՍ 7. ԳԼՈՒԽ 3 — ՍԱՐԴԻԿԵՒԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

## Հայտնություն 3:1-6 Նամակ Սարդիկեի

### Նոր կտակարանյան ժամանակաշրջան New Testament Period

- **Եփեսոսը**՝ մեծ քաղաքական կենտրոն էր
- **Զմյուռնիան** առևտրի մեծ կենտրոն էր
- **Պերգամոնը**՝ մեծ կրոնական կենտրոն
- **Թիվասիքը**՝ հայտնի է եղել իր Մանրագործվածքներով, հասկապես մանուշակագույն ներկերի եւ նրա առևտրի արտադրությամբ: (մանուշակագույն ծածկոցը խորհրդանշում էր կառավարող իշխանությունը)
- **Սարդիկեն** հայտնի է եղել Ոսկուց և արծաթից պատրաստված մետաղադրամներով:

Այս նամակը գրվելուց յոթ հարյուր տարի առաջ Սարդիկեն աշխարհի ճանաչված քաղաքներից մեկն էր: Այն համարվում է Ասիայի հնագույն քաղաքներից մեկը: Ճանապարհորդական ռազամավարական տեղակայումը Պերգամոնի, Զմյուռնիայի, Եփեսոսի և Փոյուգիայի միջև Սարդիկեին տալիս էր առևտրի լավ հնարավորություն և այն դարձել էր շատ հարուստ մի քաղաք: Ոսկուց և արծաթից «Լիդիական դրամները» աշխարհի առաջին մետաղադրամներն էին, մոտավորապես Ք.Ա. 6-րդ դարում:

**Եվ գրի՛ր Սարդիկեում գտնվող եկեղեցու հրեշտակին...**

### 1. Սարդիկե – «մնացորդ» կարմիր քար (դեղին ստվերում)

**Հայ. 4:3 - 3** Եւ նստողը հասպիս եւ սարդիոն քարի երեվույթի նման էր.

**Հայ. 21:19-20 - 19** Եւ քաղաքի պարիսպի հիմունքը զարդարուած էին ամեն ազնիվ քարերից. Պարսպի առաջին հիմքը՝ հասպիս, երկրորդը՝ շափիւղա, երրորդը՝ կարկեհան... վեցերորդը՝ **սարդիոն...**

## 2. Քրիստոսի տիտղոսը – Title of Christ

1) «Այսպես է ասում Նա, որ ունի **Աստծո յոթ հոգիները** և յոթ աստղերը»:

Եվ Տիրոջ (Յահվելի) Հոգին Նրա վրա պիտի հանգչի՝ իմաստության և հասկացողության Հոգին, խորհրդի և գործության Հոգին, գիտության և Տիրոջ երկյուղի Հոգին:

Եսայի 11:2

«Աստծո յոթ հոգիները». Հին Կտակարանում Սուրբ Հոգու անվանում էր: Ինչու՞ է Հիսուսն այս անունն օգտագործում հենց այս եկեղեցու հանդեպ: Շատ հարանվանություններ իրենց լավ չեն զգում Սուրբ Հոգու հետ. եկեղեցիներում մեծամասամբ այդ պատճառով են բաժանումներ լինում:

Նրանք դեռ օգտագործում էին Քրիստոսի անունը եւ եղել են արտաքուստ մի եկեղեցի Քրիստոսի անունով: Անդամներից շատերը դավանում էին Քրիստոնեությունը, բայց ոչ իսկապես վերածնված:

## 3. Գովասանք – Commendation

Ոչ մի «գովասանք» չկա այս նամակում:

## 4. Անհանգստություն – Concern

1) Գիտեմ քո գործերը՝ որ **անուն** ունես, թե կենդանի ես, բայց մեռած ես:

**Անուն = պիտակ (label)**, ծածկված լինել անունով: Այս բառը երեք անգամ հանդիպում է այս նամակի վեց համարներում: Սարդիկեն անուն (պիտակ) ուներ, բայց ևս այնպես մեռած էր: Մեծ նեղություններ («Եթե չապաշխարեն». միայն անապաշխարհ եկեղեցին է մտնելու դրա մեջ):

Նրա գործերը կարող էին արտաքուստ տպավորիչ թվալ մարդկանց համար, բայց ոչ Աստծո առջեւ, այնուամենայնիվ **մոտիվացիան** սխալ է եղել:

## Հարանվանական եկեղեցի The Denominational Church

- «Մեղմ» հերմենևտիկ (hermeneutical) ավանդություններ
- Հազարամյա թագավորության հերքում
- Իսրայելի մարգարեական ապագայի հերքում
- Աստվածաշնչյան նվիրյալ (devotional) կյանքի բացակայություն
- Քրիստոսի Ավետարանը չշեշտելը (De-emphasis)
- Հոմոսեքսուալիստների ձեռնադրությունը

### 5. Քաջալերանք – Exhortation

2) **Արթուն եղիր** և հաստատի՛ր այն **մնացած(ներին) բաները**, որ մեռնելու վրա են, քանի որ քո **գործերն Աստծո առաջ կատարյալ չեն գտնում:**

3) Ուստի հիշի՛ր, թե ինչպես ընդունեցիր ու լսեցիր և ամուր պահի՛ր, և ապաշխարի՛ր: Եթե արթուն չմասս, **գողի պես գալու եմ քո վրա**, և բնավ չես իմանալու, թե որ ժամին եմ գալու քո վրա

Արթուն Բնավու կոչ. հակաճառություն նրանց, ովքեր արհամարում են ժամանակները, «գիշերվա գողի պես» առակ-արտահայտությունը ցույց էր տալիս Մարդիկեի անկում վիճակը: Ակնհայտ է, որ նրանց համար, ովքեր արթուն են, նա չի գա գողի պես...

**1 Թես. 5:2-11 - 2** Որովհետեւ դուք ինքներդ հաստատ գիտեք, թե Տիրոջ օրը ինչպես գիշերուա գող՝ այնպես կ'հասնէ: **3** Վասն զի երբոր կ'ասեն թե խաղաղութիւն եւ ապահովութիւն է, այն ժամանակ հանկարծակի կ'հասնէ նորանց վրա կորուստը ինչպես ցավը հղիի վրա, եւ նորանք չեն պրծնի: **4** Իսկ դուք, եղբայրներ, խավարում չէք, որ այն օրը գողի պես ձեզ վրա հասնի: **5** Դուք ամենքդ լույսի որդիներ էք եւ ցերեկի որդիներ, գիշերինը չենք եւ ոչ խավարինը: **6** Ապա ուրեմս չ'քնենք ուրիշների պես, բայց արթուն եւ զարթուն լինենք: **7** Որովհետեւ նորանք որ քնում են գիշերն են քնում, եւ նորանք որ հարբում են գիշերն են հարբում: **8** Իսկ մենք ցերեկինը լինելով արթուն լինինք՝ հագած հավատքի եւ սերի զրահը, եւ փրկության հույսի սաղավարտը: **9** Որովհետեւ Աստուած մեզ չ'դրաւ բարկության համար, այլ փրկութիւն ստանալու համար մեր Տէր

Հիսուս Քրիստոսի ձեռով. <sup>10</sup> Որ մեզ համար մեռավ, որ թե արթուն լինենք եւ թե քնենք, նորա հետ մէկտեղ ապրենք: <sup>11</sup> Սորա համար իրար միմիջարեցէք, եւ իրար շինություն տուէք՝ ինչպէս անում էլ էք:

**1 Յով. 2:28** - <sup>28</sup> Իսկ այժմ, որդեակներ, փափակէք նրա մէջ, որպէսզի, երբ նա հայտնուի, վստահութիւն ունենանք եւ նրա գալստյան ժամանակ նրանից չամաչենք.

### «Արթուն եղիր»

- Զգոն եղիր. 10 կույսերը. Մաթ. 25
- Արթուն վիճակ. Հռոմ. 13:11, Ա կորն. 16:13

**1 Կոր. 16:13** - <sup>13</sup> Արթուն եղէք, հաստատուն փափակէք հավատքի մէջ, քաջ եղէք, զօրացէք:

- Արթուն եղէք
  - սատանայի չարությունների համար. Ա Պետ. 5:8
  - փորձությունների համար. Մաթ. 26:41
  - Նրա գալուստի համար. Մաթ. 24:42,43, Մարկ. 13:37, Ա Թեսաղ. 5:6
  - Սուտ վարդապետների համար . Գործք 20:29-31 (Եփեսոսն արթուն էր)

### «Չաստատիր մնացած բաները»

Մեծ ճշմարտությունները կորսվել էին. արդարացում միայն հավատով, Աստծո Խոսքի անարատությունը (inerrant), մարդու ապականված լինելը, փրկագնում միայն Արյունով: **Ռեֆորմացիայի** մեծագույն ճշմարտությունները կորսվել էին... Քրիստոսը մեր մեջ ինչ որ բան է փնտրում:

### «... Գործերը կատարյալ չեն»

Մեր սերը, մեր աստվածավախությունը (մեր նվիրյալ կյանքը), մեր հավատարմությունը և մեր ծառայությունը: Առանց Նրա, մենք չենք կարող անել: Առանց մեզ, Նա չի անի:

4) Սակայն Սարդիկեյում անգամ **մի քանի անուններ կան**, որ չեն կեղտոտել իրենց հագուստները և ճերմակ հագուստով շրջելու են Ինձ հետ, քանի որ արժանի են:

«Սարդիկեյում անգամ» = կոչ հավատարիմ փասցորդին:

## 6. Խոստում հաղթողներին – Promise to the Overcomer

5) Նա, **ով հաղթի**, ճերմակ է հագնելու, ու Ես նրա անունը **չեմ ջնջելու Կենաց գրքից**, այլ նրա անունը դավանելու եմ Իմ Հոր ու Նրա հրեշտակների առջև:

6) Նա, ով ականջ ունի, թող լսի՛, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին:

1 Կոր. 9:27 - 27 Այլ իմ մարմինը ճնշում եմ եւ նուաճում, որ միգուցե ուրիշներին քարոզելով, ինքս անպիտան գտնուիմ:

but I discipline my body and make it my slave, so that, after I have preached to others, I myself will not be disqualified.

### Ի՞նչ է նշանակում նրա անունը չեմ ջնջելու Կենաց գրքից:

- Սարդիկեյում բնակվող քաղաքացիները գրանցված են եղել իրենց հնագույն քաղաքների մատյանում: Մահացածների և քրեական հոտվածով դատապարտվածների անունները ջնջել են գրանցումից: Այսպիսով, ոմանք անուն են ունեցել թե կենդանի են, բայց մեռած են: (Հայտնություն 3:1), նրանք հեռացվել են Աստծո երկնային քաղաքացիների եւ հավերժական կյանքի ժառանգությունից:
- Հարություն առած Քրիստոսը ասում է եթե մենք ցանկանում ենք փալ Աստծո արքայության քաղաքացիներ, մենք պետք է պահենք մեր հավատքը կենդանի:

**Ել. 32:31-33** - <sup>31</sup> Եւ Մովսէսը ետ դարձավ Եհովայի մօտ եւ ասեց. Ոհ, այս ժողովուրդը մեծ մեղք գործեց, եւ իրենց համար ոսկի աստուածներ շինեցին: <sup>32</sup> Բայց հիմա եթէ նորանց մեղքերը ներես՝ ներիր, եթէ ոչ՝ աղաչում եմ ջնջիր ինձ **քո գրած գրքիցը**: <sup>33</sup> Եւ Եհովան ասեց Մովսէսին. Ով որ ինձ դէմ մեղանչել է, ես նորան կջնջեմ իմ գրքիցը:

**Սաղ. 69:28 - 28** Թող նրանք ջնջուեն **Կենաց գրքից**, և քո արդարների շարքում չարձանագրուեն:

**Ես. 4:3 - 3** Եւ այնպէս պիտի լինի որ Սիօնի փացածը եւ Երուսաղէմի փացորդը սուրբ պիտի կոչուին. ամենքը որ **գրուած են կեանքի** համար Երուսաղէմում:

**Դան. 12:1 - 1** Եւ այն ժամանակ պիտի ելնի Միքայէլ մեծ իշխանը, որ կանգնած է քո ժողովրդի որդկանց վրա. եւ նեղութեան ժամանակ կլինի, որը եղած չէ քանի որ մի ազգ կա մինչ այս ժամանակ, եւ այն ժամանակ քո ժողովուրդը կազատուի՝ ամեն ով որ գտնուի **գրքումը գրուած**:

**Եբր. 12:22-23 - 22** Այլ մօտեցել էք Սիօն սարին, եւ կենդանի Աստուծո քաղաքին, երկնավոր Երուսաղէմին, եւ բիրաւոր հրեշտակներին, <sup>23</sup> Եւ **երկնքում գրուած** անդրանիկների հանդէսին եւ եկեղեցուն, եւ ամենի դատաւոր Աստուծուն, եւ կատարեալ արդարների հոգիներին.

**Ո՞վ է «Յաղթողը»:**

«Քանի որ ամէն ոք, որ Աստծուց է ծնուած, հաղթում է աշխարհին: Եւ ա՛յս է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հավատը: 5 Եւ ո՞վ է, որ յաղթում է աշխարհին, եթէ ոչ նա, ով հաւատում է, որ Յիսուսն է Աստծու Որդին:»:

Ա Հովհ. 5:4,5:

**Թվ. 20:7-12** — Աստված արգելում է Մովսէսին և Ահարոնին մտնել խոստացալ երկիրը:

**Եբր. 4:11** — Ուրեմն ջանանք այն հանգստի մէջ մտնելու. որ միգուցէ մէկը նույն անհավատության օրինակի պէս ընկնի:

## 7. Ավարտ – Close

6) Նա, ով ականջ ունի, թող լսի, թէ Հոգին ինչ է ասում եկեղեցիներին:

## **Խրատական մակարդակ (բոլոր եկեղեցիներին)**

### **Admonitory Level (to all churches)**

- ✓ Եփեսոս – Նվիրում, ոչ թե միայն վարդապետություն
- ✓ Զմյուռնիա – Տոկալ (դիմանալ) նեղություններին
- ✓ Պերգամոն – Մաքրեզերծել դեսպանության ծառայությունը
- ✓ Թիվատիր – Հեթանոսական գործունեություն
- ✓ Սարդիկե – Զգոնություն, արթուն վիճակ

## **Անձնական կիրառություն (Յոմուլետիկա)**

### **Personal Application (Homiletics)**

- ✓ Եփեսոս – Անտեսված առաջնայնություններ
- ✓ Զմյուռնիա – Սատանայական ընդդիմություն
- ✓ Պերգամոն – Հոգևոր փոխզիջում
- ✓ Թիվատիր – Հեթանոսական գործունեություն
- ✓ Սարդիկե – Զգոնություն, արթուն վիճակ

## **Խոստում հաղթողներին**

### **Promise to the Overcomer**

- ✓ Եփեսոս – Ուտել Կենաց ծառից
- ✓ Զմյուռնիա – Չփսասվել երկրորդ մահից
- ✓ Պերգամոն – Մանանա, քար, անուն
- ✓ Թիվատիր – Իշխանություն ազգերի վրա
- ✓ Սարդիկե – Քայլել Նրա հետ ճերմակներով, անունը չի ջնջվի

## **Մարգարեական պատկերը**

### **Prophetic Profile**

- ✓ Եփեսոսը ներկայացնում է Առաքելական Եկեղեցին:
- ✓ Զմյուռնիան ներկայացնում է հալածվող եկեղեցին:
- ✓ Պերգամոնը ներկայացնում է «ամուսնացած» եկեղեցին
- ✓ Թիվատիրի եկեղեցին ներկայացնում է (Միջնադարյան) Եկեղեցին:  
Պապական իշխանությունը:
- ✓ Սարդիկեն ներկայացնում է Հարանվանական եկեղեցին:

## Հաջորդ դասը

Կարդա 2-րդ և 3-րդ գլուխները (յոթերորդ անգամ): Ուրվագծիր Ֆիլադելֆիային ուղղված նամակը (Հայտնություն 3:7-13): Որո՞նք են այս նամակի առանձնահատկությունները: Ի՞նչ եզակի խոստում է այստեղ տրված:

### Ժայռ եկեղեցին (Սան Դիեգո, Կալիֆորնիա)

- «Կիրակնօրյա եկեղեցում» բոլորը փոքր խմբերում են (6-12 մարդ)
- Փոքր խմբերն ամեն շաբաթ հանդիպում են իրենց առաջնորդի հետ: Նրանք աղոթում են, հաշվետու լինում և քննարկում քարոզի նշումները: Երբ որևէ Փոքր խումբ անցնում է 12 հոգին, այն բաժանվում է 2 մասի:
- Առաջին երկու տարում Ժայռ եկեղեցին աճեց մինչև 4.000 հոգի:

### Փոքր խմբերի առավելությունը

- Դաստիարակվում է բազմացում
- Ազատ են աճելու սահմանափակումներից
- Մասնակիցներն ավելի շատ են «ներգրավված»
- Անձական փոփոխություն և հաշվետվություն
- Ավելի արդյունավետ է նորադարձների համար
- Լուծում է առաջնորդության հետ կապված ճգնաժամերը
- Ավելի աստվածաշնչյան է
- Հալածանքներին դիմացող կառուցվածք է
- Ավելի ձեռնտու է. քիչ ծախսատար է

### Փոքր խմբերի առանձնահատկությունները

- Օրգանական է, ոչ թե կազմակերպչական. ռազմիոնալ է, ոչ թե պաշտոնական:
- Հալածանքներին դիմացող կառուցվածք է. արցունքների մեջ հասունանում է, ճնշումների տակ բազմանում է, անապատում ծաղկում է, մթության մեջ տեսնում է, քառսի մեջ փարթամանում է...
- Միակ պարծանքը Գառնուկն է



## Ընտրված Բայց իմ Ազատ Կամքով

Փնտրել Աստվածաշնչյան Հավասարակշռություն		
<p>Աստվածաշունչը մեզ ասում է որ Հիսուսի մահը որոշված է եղել Աստուծո կանխագիտությամբով.</p>	<p><b>Գործ. 2:23</b> Նորան, որ Աստուծո սահմանուած <b>խորհրդով</b> եւ <b>կանխագիտությամբով մատնուած էր</b>, առաք անօրէնների ձեռով փայտի վրա բեւեռած, սպանեցիք.</p>	<p><b>Հիսուսն ասաց որ դա արեց Իր կամքով.</b></p> <p>Հով. 10:17-18 - 17 Նրա համար է իմ Հայրն ինձ սիրում, որ <b>ես իմ կյանքն եմ տալիս</b>, որպէսզի վերստին այն առնեմ: 18 Այն ինձնից ոչ ոք չի վերցնի, այլ <b>ես ինքս եմ այն տալիս</b>. Իշխանութիւն ունեմ այն տալու եւ իշխանութիւն ունեմ վերստին այն առնելու. այս պատուէրը իմ Հօրից ստացաւ.</p>
Աստված նախասահմանեց խաչը բայց Հիսուսն Իր կյանքը կամովի տվեց		
<p><b>Փրկությունը. Ընտրված Աստծո կամքից եւ ընտրված մեր կամքով:</b></p>	<p><b>Հով. 6:37, 44</b> Բոլոր նրանք, ում Հայրն ինձ է տալիս, կը գան ինձ մօտ, եւ ով որ ինձ մօտ կը գա, դուրս չեմ անի. 44 ոչ ոք չի կարող գալ դէպի ինձ, եթէ նրան չձգի Հայրը, որ ինձ ուղարկեց, եւ ես նրան վերջին օրը հարություն առնել կը տամ:</p>	<p><b>Մեր կամքով հավատքի միջոցով.</b> <b>2 Թես. 2:12-13</b> 12 ...որովհետեւ Աստուած սկզբից <b>ընտրեց մեզ</b>, որ փրկուենք Հոգու սրբացումով եւ ճշմարտության <b>հավատով</b>, 13 որին եւ կանչեց ձեզ մեր ավետարանումով փրկուելու եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառքին տիրանալու համար:</p> <p>Հովհ. 3:16 ...որ ամեն նորան հավատացողը չկորչի...</p>
Մերժում Քրիստոսին: Աստծո նախասահմանությունը և մարդու անհնազանդությունը		

**Փնտրել Աստվածաշնչյան Հավասարակշռություն**

<p><b>Պետրոս Առաքյալը իր խոսքերի մեջ պարզ նշել է ներդաշնակությունը Աստծո նախնական որոշման եւ մեր ազատ ընտրության միջեւ:</b></p> <p><b>Վերջում կան միայն երկու տեսակ մարդիկ: Նրանք ովքեր ասում են Աստծուն, «Քո կամքը թող լինի» եւ նրանց ում Աստված է ասում, վերջում «Քո կամքը թող լինի» Բոլոր նրանք որ գտնվում են դժոխքում, իրենք են ընտրել այն:</b></p> <p><b>C.S. Lewis</b></p>	<p><b>1 Պետ. 2:7-8</b></p> <p>Արդ՝ ձեզ հավատացեալներիդ պատուականութիւնն է. Բայց անհաւատներին այն քարը որ շինողներն անարգեցին, նա անկիւնի գլուխ եղաւ. 8 Եւ գլորման քար, եւ գայթակղելու վեմ որ գայթակղում են խօսքին <b>չ'հաւատալով.</b> որ նրանք հէնց այդ բանի համար էլ սահմանուած էին::</p>	<p><b>Գործ. 13:46,48</b></p> <p>46 Պօղոսը եւ Բարնաբասն էլ համարձակությամբ ասում էին. Առաջ պէտք էր որ Աստուծո բանը ձեզ խօսուէր. բայց որովհետեւ դուք <b>մերժում էք</b> նորան եւ արժան չէք համարում ձեզ <b>հաւիտենական կեանքին,</b> ասեալով ինչ հեթանոսներն ենք դառնում:</p> <p>48 Հեթանոսներն այս լսելով ուրախանում էին. Եւ Տիրոջ խօսքը փառաւորում էին. Եւ <b>հավատացին</b> քանիսը որ կարգուած էին դէպի հավիտենական կյանքը:</p> <p>Հռ. 11:25 - 25 ...մինչեւ որ հեթանոսների լրութիւնը մտնէ:</p>